

բոլորն ուրեմն կատարեալ եղծումն էր քրիստոնէական ազապին նախկին՝ հարազատ ու պարզ ձեւին:

2. Ադոր հետ կատարելապէս զուգընթաց էր գաղափարին խանգարումն ալ, որ մեր խնդրոյն մէջ կարեւորագոյն է քան արտաքինը: Ի՞նչ էր այս ճաշին սկզբնական իմաստը: Սեղանակցութեամբ ջերմ պահել եղբայրական միութիւնը հաւատացելոց մէջ, եւ չքաւոր կրօնակիցները կերակրելով՝ Աստուծոյ առջեւ արդիւնք շահիլ: Այս էր անոր միակ վախճանը Մանդակունւոյն համոզմանց մէջ (աստ, 322): Եւ եթէ ի յիշատակ ննջեցելոց էր, թէ անոնց հոգւոյն եւ թէ նուիրողին նպատակոր պիտի լինէր, ինչպէս յայտնի է Հարց խօսքերէն (աստ, 353-4), եւ յարակից աղօթից ոմանց բովանդակութենէն (359-60), որոնք մաքուր հնութեան մը դրոշմը կը կրեն:

Բայց երկրորդ շրջանին բոլորովին յեղաշրջուած է անոր զիտաւորութիւնը: Հոն կերակուրն այլ եւս տուողին կամ հանգուցելոյն միայն շահաւոր չէ, այլ ազոնց հետ եւ ազոցմէ աւելի՝ ճաշակողաց օգտակար է: Ուտեստը կը դադրի լոկ սնունդ մը լինելէ, եւ կը դառնայ հոգեւոր ու սրբազան նիւթ մը, որ շնորհք կու տայ բո-